Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միացման
150-ամյակի առթիվ

ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

ՖՐՈՒՆԶԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Դարերի խորքից եկող հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին քառորդում աննախընթաց վերելք ապրեցին՝ կապված Պյոտր I-ի, «Պարսկական արշավանքի» և հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետ։ Այս շրջանում հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունն ու հայ-ռուսական հարաբերությունները խորությամբ և լայնությամբ թևակոխեցին նոր շրջափուլ։ Ոգևորված ռուսական արքունիքի տված խոստումներով և հատկապես ձեռնարկած առաջին քայլերով, հայ ժողովուրդը իր դարավոր կեղեքիչների դեմ ազատագրական պայքարի դրոշ պարզելով, ցանկանում էր հյուսիսի մեծ բարեկամի օգնությամբ վերջնականապես թոթափել պարսկական և թուրքական բռնակալական լուծը։ Չնայած XVIII դ. առաջին 30-ամյակի ազատագրական պայքարի և նրա հետ սերտորեն կապված հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը հանգամանորեն ուսումնասիրված է հայ պատմաբանների, հատկապես սովետահայ պատմաբանների կողմից, այնուամենայնիվ այդ ուսումնասիրություններում արտաքուստ մանր թվացող առանձին հարցեր ըստ արժանվույն չեն պարզաբանված, իսկ որոշ դեպքերում էլ մեկնաբանված են լրիվ հակառակ դիրքերից։ Դրանցից են մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում էջմիածնի կաթողիկոսության՝ հայ-ռուսական հարաբերություններն ու հայ ազատագրական շարժումներն ունեցած վերաբերմունքի և Եսայի Հասան Ջալալյանի գործունեության վերջին տարիների գնահատման հարցերը։

Էջմիածնի և ընդհանրապես Երևանի շրջակայքի հայության վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի ազատագրական պայքարն ու հայ-ռուսական հարաբերությունները, ինչպես նաև Ղարաբաղի սղնախների հետ էջմիածնի կապի հարցը կազմում են հայ ժողովրդի՝ Ռուսաստանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, հայ-ռուսական հարաբերությունների, այսինքն՝ գլխավոր հարցի մի մասը։ Նշված հարցերի ճիշտ պարզաբանումը խիստ կարևոր է նաև այդ շրջանում էջմիածնի, այսինքն փաստորեն Արարատյան աշխարհի, դեպի հայ-ռուսական հարաբերություններն ու ազատագրական շարժումներն ունեցած վերաբերմունքի կապակցությամբ։

Սկզբնաղբյուրները վկայում են, որ իրականությանը բոլորովին չի համապատասխանում Եզովի այն կարծիքը, ըստ որի, իբր, «էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի՝ ռուսական կառավարության հետ պաշտոնա-

կան հարաբերությունների սկիզբը վերաբերում է XVIII դ. երկրորդ կեսին, Եկատերինա II կայսրուհու թագավորության շրջանին»[1]։

Հայտնի է, որ դեռևս XVII դ. 70-ական թվականների սկզբին հայրենասեր կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին հատուկ նամակով դիմել է ռուսական ցարին, խնդրելով, որ ռուսական կառավարությունը օժանդակի, պաշտպանի հայերին, միջնորդի պարսկական շահի առաջ՝ դադարեցնելու հայերի նկատմամբ գործադրվող հալածանքները։ Այդ նամակը[2] փաստորեն հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների սկզբնավորման ուղղությամբ կատարված առաջին և կարևոր քայլերից մեկն էր։

Այնուհետև պաշտոնական նամակով ռուսական արքունիքին է դիմել Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսը (1706—1715)։ Իսրայել Օրու Էջմիածնում գտնվելու կապակցությամբ 1709 թ. հունիսի 7-ին Պյոտր I-ին հղած նամակում նա հայտնում է հետևյալը. «Մեր սիրելի որդի Իսրայելը հանդիպեց սուրբ աթոռս, որին մենք սիրով և մեծ ուրախությամբ ընդունեցինք, չափից ավելի սեր և ընդունելություն ցույց տվինք։ Նա ամեն ինչ մեկ առ մեկ պատմեց մեզ, մենք ուրախացանք և ցնծացինք, օրհնելով օրհնեցինք Ձեզ։ Թող աստված հաստատ ու պայծառ պահի Ձեզ՝ որպես քրիստոնյա ազգիս պարծանք»[3]։ Ճիշտ է, հայ եկեղեցու վեհապետը նամակում բացահայտ քաղաքական հարցեր չի արծարծում, սակայն պարզ երևում է, որ ոչ միայն կաթողիկոսը, այլև նրան մոտ կանգնած մարդիկ լիովին հավանություն են տվել Օրու քաղաքական ծրագրին, այսինքն՝ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ու հայ ժողովրդին ազատագրելուն, մի բան, որը խոստացել էր Պյոտր I-ը և որի համար էլ նրանք «օրհնելով օրհնում» էին նրան։ Աղբյուրները վկայում են, որ Ալեքսանդր Ջուղայեցու հաջորդ Աստվածատուր Համադանցին (1715—1725) էլ ավելի հակվեց դեպի հայ ժողովրդի ազատագրական պայքարն ու հանգեց Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարին։ Այս հարցում, անշուշտ, մեծ դեր խաղացին 1716 թ. Արևելյան Հայաստան եկած Իսրայել Օրու ընկեր Մինաս վարդապետ Տիգրանյանցը, ինչպես նաև Եսայի Հասան Ջալալյանի հանդիպումները Աստվածատուր Համադանցու հետ։

Աստվածատուր Համադանցու գործունեության, մասնավորապես մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ, խիստ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել XVIII դ. 20-ական թվականներին կազմակերպված հայկական առաջին կամավորական ջոկատներից մեկի հրամանատար Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «ժամանակագրությունում»։

Խոսելով Պետրոս I-ի «Պարսկական արշավանքի» կապակցությամբ Թուրքիայի շտապ պատերազմական պատրաստությունների մասին, Գիլանենցը միաժամանակ հայտնում է, որ 1722 թ. սեպտեմբերի 8-ին ինքը Կարսում եղած ժամանակ ականատես է եղել հետևյալին։ Այդ ժամանակ մեռոն օրհնելու կապակցությամբ կաթողիկոսը Կարսի և նրա շրջակա հայությանը հրավիրած է լինում Էջմիածին, սակայն Կարսի փաշան հայերին խստիվ արգելում է մեկ-

---

[1] Г. А. Эзов, Начало сношений эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901, стр. 1.

[2] «Армяно-русские отношения в XVII в.», т. I, Ереван, 1953, стр. 98.

[3] Центральный государственный архив древних актов (ЦГАДА), ф. 100, 1707—1711. д. 1, л. 32, տե՛ս նաև «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», ч. I, Ереван, 1964, док. 155.

նելու Էջմիածին, պատճառաբանելով, որ «օսմանցուն ըռայեաթ խայ չը գընայ Էջմիածինն և ասաց՝ թէ ձեր կաթողիկոսն ըռուստին խետ միայվորվել այ և ըռուսան բերել այ ղզլբաշի երկիրն՝ որ գոն մեզ վերայ։ ...Յալդայ էտ մահանօվն ուգէք գընէք... որ մենք վարթարդ լինենք, դուք ուրախանէք...»[4]։

Այնուհետև Գիլանենցը պատմում է, որ 1723 թ. սկզբներին Թուրքիայի պատվիրակը գտնվելով Երևանում, սուլթանի անունից պահանջում է, որպեսզի Երևանի խանությունը հանձնվի Թուրքիային, իսկ վերադարձին՝ ապրիլի 2-ին, գտնվելով Էջմիածնում, Աստվածատուր կաթողիկոսին հայտարարում է հետևյալը. «...դու էլ մեծ սուլի (այսինքն հանցանքի—Ֆ. Պ.) տէր աս, որ ըռուստին հետ մին աս դառցէլ, էսչանք խայ աս կանգընացուցէլ՝ որ ասում ան՝ թլ. ԿՌ (60) հազար հայ երաղօվ հազիր ան՝ որ քոյ խօսկօվն ան խայէրն վեր ան կացէլ, դու էլ շատ նեղութիւն կը քաշես, էս պատճառիւ, որ ուղես ըռուստն ես ձեր երկրօվն բերէս մեր երկիրն»[5]։

Վերոհիշյալ փաստերից պարզ կերպով երևում է, որ Աստվածատուր կաթողիկոսը եղել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի և Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը թուրքական և պարսկական բռնակալական տիրապետությունից ազատագրելու ոչ անտարբեր կողմնակիցը։ Գիլանենցի հաղորդած տեղեկություններից երևում է, որ այդ ժամանակ ամենուրեք թե՛ Թուրքիայում և թե՛ Պարսկաստանում տարածված էր այն կարծիքը, որ Էջմիածնի կաթողիկոսի «խօսկօվն ան խայէրն վեր ան կացէլ», որ հայոց «կաթողիկոսն ըռուստին խետ միայվորվել այ» և այլն։

Էջմիածնի և ընդհանրապես Արարատյան աշխարհի հայության ռուսական կողմնորոշում ունենալու մասին արժեքավոր տեղեկություններ ունենք նաև 1724 թ.։ Ռուսաստանի պատվիրակ Իվան Կարապետի Ղարաբաղում գտնվելու կապակցությամբ Էջմիածնի աթոռակալ Հովասափ վարդապետը 1724 թ. մարտի 13-ին սղնախների յուզբաշիներին ուղղված նամակում նկարագրելով Էջմիածնի, Երևանի և նրանց շրջակայքի հայության «անպատմելի և անասելի» նեղությունները, ծանր կացությունը, միաժամանակ հայտնում է, որ հայերի միակ հույսն ու «ակնկալութիւնն հիւսիսայինն է, նորա գալստեանն և ճանապարհին են սպասում, ղապուլ են հիւսիսայնոց գալստեանն... այլոց ակնկալութիւն չունին, այլ միայն հիւսիսայնոցն կու սպասեն։ Դոցա օգնականութիւնն և գալուստն շուտով լինի, քանի որ թշնամաց ձեռն չեմք մատնվել, գերի և աւար չեն հարկաներ, շուտով գայցեն, մեզ այցելութիւն և ազատութիւն լիցի»[6]։

Այնուհետև, կարծես հետագայում թյուրիմացությունների տեղիք չտալու համար, Հովասափը ավելացնում է, որ դա ոչ միայն իր անձնական ցանկությունն է, այլև հայ մեծամեծների, բոլոր հայության. «Եւ տեղոյս մեծամեծ աղայնոց խորհուրդն հարցանէք, միտքն և խորհուրդն և գիտաւորութիւնն առ հիւսիսայինքն են, միշտ կու սպասեն դոցա գալստեանն, այլ ամենեցուն հետ մասն և խորհուրդ ոչ ունին»[7]։

---

4 «Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի» («Կռունկ», Թիֆլիս, 1863, հոդ. 96)։

5 Նույն տեղում, հոդ. 102։

6 Архив внешней политики России (АВПР), ф. «Сношения России с Арменией», 1724, д. 4, лл. 8—9.

7 Նույն տեղում։

Սկզբնաղբյուրները վկայում են նաև, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Էջմիածինը ոչ միայն ազատագրական պայքարի կողմնակից է եղել, այլև որոշակի կապերի մեջ է գտնվել Ղարաբաղի ազատագրական պայքարի ղեկավարների հետ։ Ահա թե ինչ է գրել այդ մասին Գիլանենցը. «Մեր կաթուղիկոսն հայոց ասկարին իւէտ մին այ՝ որ յամիշայ գաղտուկ մին ըզմինու գիր ան ելէլ գրում»[8]։ Այնուհետև Գիլանենցը հայտնում է, որ հայ զինվորականությանն ուղղված կաթողիկոսի նամակներից մեկը ընկել է թշնամու ձեռքը և հանձնվել Երևանի նայիբին։ Վերջինս բանտարկել է կաթողիկոսին և միայն անվանի մարդկանց միջնորդությունից և 4 հազար ոսկի ստանալուց հետո է ազատել նրան։ Մի այլ առիթով Գիլանենցը տեղեկացնում է, որ Երևանի նայիբը բռնությամբ կաթողիկոսին ստիպել է հայոց զորքերին գրել «թէ Յարևանայ մարդիքըն մեզ դօստ ան, էտոնց դէկմիշ չնէք և գէք ոչ՝ էս երկիրըն մտնէք, խարաբ առէք...», սակայն, որովհետև այդ ամենը հակառակ էր կաթողիկոսի կամքին, նա վտանգի ենթարկելով իր կյանքը, նամակի վերջում ավելացրել է. «թէ դուք ինչպես խերիաթ կը տեսնեք, էնպես արէք, ձեր գիտցածն ձեռաց տէք ոչ...»[9]։

Զարմանալիորեն այս արժեքավոր փաստերը ինչպես հարկն է ուշադրության չեն արժանացել, իսկ վաստակաշատ Լեոն ելնելով Մինաս վարդապետին Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի 1718 թ. սեպտեմբերի 24-ին գրած նամակում էջմիածինցիների հասցեին արված մի ակնարկից, որ պետք է զգուշանալ նրանցից, հանգել է բոլորովին այլ եզրակացության։ Նա գրել է, որ այդ «...համառոտ ակնարկությունը բաց է անում մեր առջև հայոց պատմությանն այնքան լավ հայտնի մեծ չարիքը՝ ընտանի վատությունը, որին զոհ էին գնում հայրենիքի ամենավեհ և ամենանվիրական շահերն անգամ։ Պարզ երևում է, որ էջմիածինը չէր ուզում բավականանալ այն անտարբեր դիրքով, որ բռնել էին նրա մի քանի կաթողիկոսները հայոց հարցի վերաբերմամբ, այլ աշխատում էր նաև վնասել այդ գործին՝ մատնությունների միջոցով»[10]։ Բացի այդ, Լեոն էջմիածնի և Աղվանից կաթողիկոսության միջև ծագած վեճի պատճառը նույնպես տեսնում էր այն բանում, որ, իբր, Եսայի Հասան Ջալալյանը կողմնակից էր հայ ժողովրդի ազատագրական պայքարին, իսկ էջմիածինը՝ դեմ էր։ Նա գրել է. «Այն ժամանակից, երբ Եսայի կաթողիկոսը հանդես եկավ իբրև հայկական շարժման պարագլուխ, էջմիածնի և Գանձասարի միջև բորբոքվեց հին հակառակությունը»[11]։ Զարգացնելով իր տեսակետը, Լեոն գտնում էր, որ, իբր, ազատագրական պայքարի հետ Եսայու կապվելու պատճառով Շամախու թեմի շուրջը վեճ բացվեց էջմիածնի և Գանձասարի միջև, որ էջմիածինը տեսնելով ազատագրական պայքարին Եսայու ակտիվորեն հարելը. ուզում էր նրանից խլել այդ թեմը։

Նախ, Եսայու ռուսական կողմնորոշում ունենալու և ազատագրական պայքարին կողմնակից լինելու հանգամանքը էջմիածնին նոր չէր, որ հայտնի էր։ Դա շատ լավ գիտեր ինչպես Աստվածատուր Համադանցին, այնպես էլ նրա նախորդ Ալեքսանդր Ջուղայեցին և վերջինս էր, որ, այդ ամենը լավ իմանալով

---

8 «Կռունկ», 1863, հոդ. 104։

9 Նույն տեղում, հոդ. 105։

10 Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 601։

11 Նույն տեղում։

հանդերձ, 1708 թ. Շամախու թեմը հանձնեց Աղվանից կաթողիկոս Եսայուն[12]։ Իսկ թե ինչո՞ւ և ինչպե՞ս պատահեց, որ հետագայում Աստվածատուր կաթողիկոսը Շամախու թեմը հետ վերցրեց Աղվանից կաթողիկոսի ենթակայությունից, այս հարցերի պատասխանները հստակ կերպով տրված են «Ջամբռում»[13], Սիմոն Երևանցու և հենց իր՝ Աստվածատուր կաթողիկոսի, այն կոնդակներում, որոնք ուղղված են Շամախու հասարակայնությանն ու Աղվանից կաթողիկոս Եսայուն։ Սիմոն Երեանցին գրում է, որ երբ Աստվածատուր Համադանցին ընտրվեց կաթողիկոս «...Եսային թէ ի խառնակմանց ժամանակին, և թէ ի բարձրավզութենէ, ոչ գայ երկար միջոցաւ առ Աստուածատուր կաթուղիկոսն մեր ի տեսութիւն, որպէս և սովորութիւն էր, զի ի նոր նստիլ կաթուղիկոսին էջմիածնի, Աղուանից կաթուղիկոսն գայր ի շնորհաւորել և ի տեսութիւն...։ Վասն որոյ և Աստուածատուր կաթուղիկոսն մեր ևս բարկացեալ ի չգալն նորա, վէրստին Տէրունի առնէ զՇամախի, զՇիրվան, զՇաքի, և զշրջակայսն սոցա, և յինքն գրաւէ որպէս յառաջն լեալ էր և Աղէքսանդր կաթուղիկոսն Գանձասարու էր շնորհեալ...»[14]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ պարզ ու որոշակիորեն տրված են այն պատճառները, որոնցից ելնելով Աստվածատուր Համադանցին Շամախու թեմը հետ էր վերցրել Գանձասարից, իսկ երբ 1719 թ. Եսայի Հասան Ջալալյանը ներկայանում է Աստվածատուր կաթողիկոսին և պատմում Գանձասարի «...աղքատութեան և զի ներքոյ բաղմաց պարտուց անկանիլն...»[15] նրա, էջմիածնի կաթողիկոսը սիրով Շամախու թեմը նորից հանձնում է նրան։ Ավելին, երբ դրանից հետո Շամախու թեմը հրաժարվում է ենթարկվել Գանձասարին, պատճառաբանելով, «թէ մեք էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու ոչ ունիմք զպարտս»[16] և այդ հարցով Եսային նորից է մեկնում էջմիածին, Աստվածատուր կաթողիկոսը ոչ միայն անուշադրության չի մատնում նրա խնդրանքը, այլև կրկին անգամ կոնդակ է տալիս, այս անգամ արդեն ոչ միայն Շամախու, այլ նաև «ի վերայ... Շաքու, Ղաբալու, և այլոց շրջակայիցն...»[17]։ Կոնդակում Աստվածատուր կաթողիկոսը Եսայուն համարում է իր եղբայրը, բնակչությանը պարտավորեցնում «հնազանդիլ և ընդունիլ» Եսայի կաթողիկոսին, նշելով, որ նրան հակառակողը իրեն է հակառակում։ Բացի այդ, նա Գանձասարին է հանձնում նաև Գանձակի (Կիրովաբադի) վիճակն ու հատուկ կոնդակով թույլատրում հանգանակություն անելու Նախիջևանի, Գողթնի (Ագուլիս), Ղափանի և Թիֆլիսի թեմերից։ Ինչպես տեսնում ենք, էջմիածինը և առանձնապես Աստվածատուր կաթողիկոսը ոչ թե թշնամաբար էին վերաբերվում Եսայի կաթողիկոսին՝ ազատագրական պայքարին նրա մասնակցության համար, այլ ընդհակառակը, արտակարգ սիրալիրություն էին ցուցաբերում նրա նկատմամբ, հնարավորության սահմաններում օգնելով ու օժանդակելով նրան։ Այդ սիրալիրության պատճառը պետք է որոնել այն մեծ գործի մեջ, որին ակտիվորեն մասնակցում էր Եսային և որին հոգով ու սրտով կողմնակից էր նաև էջմիածինը։ Անշուշտ, Աստվածատուր կաթողիկոսը այդ ժամանակ գործից անտեղյակ չէր, իսկ նրա հանդիպումները Եսայու հետ հնարավո-

---

12 Սիմոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 83։
13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում, էջ 84։
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում։

ությունն էին տվել ավելի մոտիկից ծանոթանալու գործերի ընթացքին և ավելի հակվելու ռուսների օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարին։ Սկզբնաղբյուրում եղած այն ակնարկից, թե Եսային Աստվածատուրին պատմեց «ղի ներքոյ բազմաց պարտուց անկանիլն իւր» կարելի է եզրակացնել, որ Եսային Աստվածատուրին հանգամանորեն նկարագրել է ստեղծված իրավիճակը, ազատագրական պայքարի կազմակերպման համար ծախսված և ծախսվելիք գումարների անհրաժեշտությունը, որին և հավանություն է տվել Աստվածատուր կաթողիկոսը, ընդառաջելով նրա ցանկություններին։

Ինչ վերաբերում է 1718 թ. սեպտեմբերի 24-ին Հասան Ջալալյանի՝ Մինաս վարդապետին ուղղած նամակին, որում իրոք նա խնդրում է զգուշություն պահպանել Շամախիում եղած էջմիածնականներից և որը վկայակոչում է Լեոն, ապա այդ մասին պետք է ասել հետևյալը.

1. Նախ պետք է հաշվի առնել, որ 1718 թ. իրոք Գանձասարի և Էջմիածնի հարաբերությունները վատ էին, բայց, ինչպես ցույց տվեցինք վերևում, ոչ հայ-ռուսական հարաբերությունների կամ ազատագրական պայքարի պատճառով։

2. Նամակից պարզ երևում է, որ Հասան Ջալալյանի խոսքը վերաբերում է ոչ թե ուղղակի էջմիածնին, այլ Շամախիում եղած էջմիածնականներին։

3. Բոլորովին չի բացառվում նաև այն հանգամանքը, որ, ինչպես Շամախիում եղած որոշ էջմիածնականներ, այնպես էլ հենց բուն էջմիածնում առանձին անձնավորություններ, ինչ-ինչ նկատառումներով հնարավոր է, դեմ են եղել հայ ժողովրդի ազատագրական պայքարին, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու գաղափարին։ Սակայն պատմագիտությունը երևույթին ոչ բնորոշ, նրա էությունից չբխող, մասնակի դեպքերից չէ, որ եզրակացությունների պիտի հանգի, ընդհանրացումներ կատարի։ Վերոգրյալից բացի, ժամանակներն այնպիսին էին, որ իր իսկ՝ Եսայու, բնութագրությամբ հայությունն «ապրում էր օձերի մեջ», որ «եթե իր նամակներից մեկն ընկներ լրտեսների կամ առհասարակ չար մարդու ձեռք...», հայերի համար կործանարար հետևանքներ կունենար։ Պարզ է, որ նման պայմաններում, նա պետք է ցուցաբերեր ծայրահեղ զգուշություն։ Այս բոլորով հանդերձ մեզ է հասել նաև Աստվածատուր կաթողիկոսի 1724 թ. սեպտեմբերի 4-ի նամակը՝ ուղղված Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանին։ Այդ նամակով նա վերջինիս հայտնում է, որ Երևանը թուրքերը գրավել են, այլևս ուրիշ հույս չկա ու խորհուրդ է տալիս պատվիրակություն ուղարկել թուրքերի մոտ, ընդունել նրանց հպատակությունը և փրկել ժողովրդին մասսայական կոտորածից, նշելով. որ հակառակ դեպքում երբ «թուրքաց զորքերն... ձեզ մոտ գան, այն ժամանակ նրանք ձեզ բոլորիդ կկոտորեն և գերի կվերցնեն. և մի սպասեք, որ նրանք գան և ձեզ ջարդեն ու կոտոր-կոտոր անեն, ու մենք այդ բանը տեսնենք մեր աչքերով»[18]։

Երկու կարծիք լինել չի կարող, որ Աստվածատուր կաթողիկոսի վերաբերմունքում առերես կատարած փոփոխությունը պարզապես քաղաքական փոփոխված իրադրության հետևանք էր։ Հայտնի է, որ այդ ժամանակ թուրքերն արդեն գրավել էին էջմիածինն ու Երևանը իրենց շրջակայքով, օղակել Ղարա-

---

[18] Г. А. Эзоз, Сношение Петра Великого с армянским народом, СПб., 1898. стр. 378.

բաղը և կանգնել նրա նախադռանը։ Հասկանալի է, որ նման պայմաններում Աստվածատուր կաթողիկոսը այլևս ոչինչ անել չէր կարող. նրան մնում էր միայն խոհեմաբար հնազանդվել նվաճողի ողորմածությանը և այդ ճանապարհով կոտորածից փրկել ժողովրդին։ Ավելին, հավանաբար Աստվածատուր կաթողիկոսն այդ նամակը գրել է հենց թուրքերի պահանջով, հակառակ իր ցանկության, ինչպես ժամանակին պարսիկների պահանջով նա նման մի նամակ էր գրել սղնախների ղեկավարներին։ Այդ մասին տեղեկացնում է Գիլանենցը, միաժամանակ շեշտելով, որ դա նա կատարել էր իր կամքին հակառակ։

Այսպիսով, սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները հնարավորություն են տալիս վստահորեն ասելու, որ Էջմիածինն ու Երևանը իրենց մեծամեծներով ու շրջակա հայությամբ հանդերձ XVIII դ. առաջին քառորդում ելել են ազատագրական պայքարի կողմնակից և ունեցել են ռուսական կողմնորոշում, միայն թե գործել են ժամանակի քաղաքական պայմաններին համապատասխան։

Այս շրջանի հայ-ռուսական հարաբերությունների և ազատագրական շարժման հետ սերտորեն կապված է նաև հայկական ազատագրական շարժման խոշոր գործիչ ու միաժամանակ պատմագիր Եսայի Հասան Ջալալյանի գործունեության վերջին տարիների գնահատման հարցը։ Լինելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի ջերմ կողմնակիցն ու ակտիվ կազմակերպիչներից մեկը և ունենալով բացահայտ ռուսական կողմնորոշում, այնուամենայնիվ առանձին ուսումնասիրություններում չի տրված այդ հայրենասեր գործչի կյանքի վերջին շրջանի գործունեության հստակ բնութագիրը, իսկ պատմական գիտությունների դոկտոր Պ. Հարությունյանը նրան համարել է դավաճան։

Հանգուցյալ պատմաբանը XVIII դ. առաջին քառորդի հայ ժողովրդի ազատագրական պայքարին նվիրված իր արժեքավոր աշխատության[19] մեջ, առանց բազմակողմանի և հանգամանորեն վերլուծելու սկզբնաղբյուրները, Եսայի Հասան Ջալալյանի գործունեությունը բաժանել է երկու շրջանի՝ 1709—1724 թթ., և 1724—1727 թթ.[20]։ Ըստ նրա, Եսայի Հասան Ջալալյանն իր գործունեության առաջին շրջանում ակտիվ դեր է խաղացել երկրի ազատագրման, Ռուսաստանին միանալու շարժման, հայ-վրացական ուժերի միավորման և այլ հարցերում, իսկ երկրորդ շրջանում, սկսած 1724 թ. սկզբներից, աստիճանաբար հեռացել է այդ շարժումից և, ի վերջո, դարձել բացահայտ դավաճան[21]։ Իր այս տեսակետը հաստատելու համար Պ. Հարությունյանը վկայակոչում է հիմնականում երկու փաստ՝ Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետին 1724 թ. մարտի 5-ին Եսայի Հասան Ջալալյանի գրած նամակը և Ավան ու Օհան յուզբաշիների 1726 թ. նոյեմբերի 15-ի նամակը՝ ուղղված ռուսական արքունիքին։ Այժմ մի կողմ թողնենք 1724—1726 թթ. օգնության հարցով ռուսական արքունիքին Եսայի Հասան Ջալալյանի գրած մի շարք աղերսական նամակները և ըստ ամենայնի քննության առնենք հենց իր՝ Պ. Հարությունյանի, վկայակոչածը։ Իվան Կարապետին ուղղված նամակում սովորական առաջաբանից

---

19 П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954.

20 Նույն տեղում, էջ 232։

21 Նույն տեղում, էջ 232—233։

հետո Եսայի Հասան Ջալալյանը հայտնում է հետևյալը. «Այս տղայոց դեղի վերայ կռիւն՝ ինձ վերայ թոհմաթ (կշտամբանք—Ֆ. Պ.) էք գրել, ես դոցայ վաքիլ (լիազոր, վկա—Ֆ. Պ.) չեմ, կամ թէ ո՞ւմ են լսում։ Դուք հալա Փարազ էիք, որ ես էն տեղէն դուրս եկի, գնացի ներքի գեղարէնքն, այլ չգիտեմ՝ ի՞նչ բանի վերայ այդպէս արին։ Ցառաջ էլ եկելին պարիշել, հիմա էլ էդպէս են արել։ Ես ի՞նչ անեմ, մեք խու աջիղ (անճարակ, խեղճ—Ֆ. Պ.) իլանք դոցայ ձեռն իլթիմաղ (աղաչանք, խնդրանք—Ֆ. Պ.) անելէն, մէկին հետ խօսում ես, մէկն է խռովում։ ...Նոր չէք տեսնում դոցայ թարպիաթն (վերջացնելը—Ֆ. Պ.), ես խօ նոցայ կամ դոցայ ընկեր չե՞մ. թէ որ մէկ բան ղմեզ ուզում են՝ գնում ենք, թէ որ չէ, խօ չէ, մեր խօսքով ով է, որ մեզ թոհմաթ էք գրում... որչափ դու ես նեղացած, հազարապատիկ՝ ես, և ամբարիշտ են, տէր չունին, միաբանութիւն չունին...»[22]։

Պ. Հարությունյանը գրել է. «Բերված նամակից երևում է, որ Եսայի կաթողիկոսը չէր ձգտում այն բանին, որպեսզի վերջ տար հայ ավագանու միջև եղած ներքին հակասություններին և երկպառակություններին, նրա համար բավական էր և այն, որ այդ մեծամեծները անձամբ իրեն վնաս չհասցնեն»[23]։ Մինչդեռ, վերոհիշյալ նամակը բոլորովին նման եզրակացության տեղիք չի տալիս։ Նամակից պարզ երևում է, որ, հակառակ Պ. Հարությունյանի այն եզրակացության, թե. իբր, նման դեպքերում Եսայի Հասան Ջալալյանը հանդես էր դալիս սոսկ դիտողի դերում, «չէր ձգտում վերացնելու ներքին հակասություններն ու երկպառակությունները», ընդհակառակը, ասվում է, որ «մեք խու աջիղ իլանք դոցայ ձեռն իլթիմաղ անելէն...», որ ինքը դրանց հաշտեցման ուղղությամբ ջանք չի խնայել «իլթիմաղ անելով»։ Բացի դրանից, նա հայտնում է, որ ինքը տեղում չի եղել, դրանից առաջ էլ նրանք կռվել էին, իսկ ինքը հաշտեցրել է։ Նա գրել է. «որ ես էն տեղէն դուրս եկի, գնացի ներքի գեղարէնքն, այլ չգիտեմ՝ ի՞նչ բանի վերայ այդպէս արին։ Ցառաջ էլ եկելին պարիշել»[24]։ Հենց «եկելին պարիշել» արտահայտությունից երևում է, որ նրանց հաշտեցման գործում պակաս դեր չի խաղացել Եսայի Հասան Ջալալյանը։ Նամակագիրը Իվան Կարապետին հայտնում է, որ այդ «ամբարիշտ», «սեր չունեցող», «միաբանություն չունեցող» մարդկանց ինքը «ընկեր չէ», ուստի քանի որ դեպքի վայրում չի էլ եղել, հետևաբար և չպետք է իրեն կշտամբել տեղի ունեցածի պատճառով, շեշտելով, որ այդ բոլորի համար «որչափ դու ես նեղացած, հազարապատիկ՝ ես»[25]։ Ընդհանուր գործին վնաս հասցնողներին Եսայու տված վերոհիշյալ գնահատականները ինքնին բնութագրում են նրան։ Հետևաբար, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 1724 և, ինչպես կտեսնենք, նաև 1725 թ. ու 1726 թ. առաջին կեսին Եսայի Հասան Ջալալյանը ոչ միայն չի հեռացել ազատագրական շարժումից և գրավել պասսիվ դիրք, այլ ամեն կերպ ձգտել է վերջ տալ ներքին երկպառակություններին։ Սակայն միշտ չէ, որ դա հաջողվել է նրան, որի համար էլ նա տրտնջում է՝ «թէ ում են

---

22 АВПР, ф. «Сношение России с Арменией», 1739, д. 2, л. 35, հմմտ. Ա. Դ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 178։

23 П. Т. Арутюнян, նշվ. աշխ., էջ 233։

24 АВПР, ф. Сношения России с Арменией, 1739, д. 2, л. 35, հմմտ. Ա. Դ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 178։

25 Նույն տեղում։

լսում»[26]։ Ուստի, եթե միջֆեոդալական կռիվների առանձին սիրահարներ կամ, իր իսկ բառերով ասած՝ «ամբարիշտներ» ու «միաբանության» թշնամիներ երբեմն չեն լսել նրան, ապա դա նրա մեղքը չէ։

Հիշենք Վ. Ի. Լենինի այն հայտնի դրույթը, ըստ որի «Պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ինչ չեն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»[27]։

Այս բոլորից բացի ինչպես կարելի է անտեսել 1724—1726 թթ. ընթացքում Եսայի Հասան Ջալալյանի կողմից ռուսական արքունիքին, Պյոտր I-ի պատվիրակ Իվան Կարապետին և ժամանակի այլ նշանավոր գործիչներին ուղղված այն բազմաթիվ ջերմ ու հայրենասիրական նամակները, որոնցում նա հանգամանորեն նկարագրում է իր մասնակցությամբ Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններն ու միաժամանակ թախանձագին խնդրում Պյոտր I-ին, որ հնարավորության սահմաններում օգնությունը շուտ ուղարկվի։ Վկայակոչենք այդ բազմաթիվ նամակներից մի քանիսը՝ գրված 1724—1726 թթ. ընթացքում։ 1724 թ. հոկտեմբերի 18-ին Պյոտր I-ին ուղղած իրենց նամակում Եսայի և Ներսես կաթողիկոսները հայտնում են, որ «...միայն յոյս... զքեզ ունիմք մեզ ապաւէն և տէր։ ...խնդրեմք և աղաչեմք մի անփոյթ և անտես առնէր զմեզ, ...խնդրեմք որ... մեզ օգնութիւն հասնես այս մօտակայ ժամանակս...»[28]։

1725 թ. մարտի 10-ի նամակում՝ ուղղված Ռուսաստանում գտնվող Վախթանգ թագավորին ու նրա որդի Շահնավազին, Եսայի կաթողիկոսը, հայտնելով 1725 թ. մարտի 1-ին Ղարաբաղի Վարանդա գավառում թուրքական շուրջ հինգ հազարանոց ջոկատի գլխովին ջախջախման մասին, միաժամանակ հիշեցնում է. «մեք այս բաներս ձեր արխով և ումիտով (այսինքն՝ Ռուսաստանից սպասվող օգնության հույսով—Ֆ. Պ.) ...ենք անում... մեր աչքն գիշեր և ցերեկ ձեր գալու ճանապարհին և գրին է... աղաչեմք, աղաչեմք, անտես մի առնէք զաղաչանս մեր, այլ հասէք մեզ... օգնութիւն...»[29]։

Այնուհետև, ռուսական կողմին ուղղված 1726 թ. հունիսի 15-ի նամակում Եսայի Հասան Ջալալյանը և սղնախների մելիքները հայտնում են, որ Գանձակում գտնվող թուրքական բանակը նույն թվականի հունիսի 10-ին հարձակվել է «...Խաչենու վերայ, Ղազանչի, Ղապրթու, Ջանկաթաղ անուն գեղարէնքն չափմիշ արարին, կոտորեցին, եսիր, ապրանքն տարան, մեք էլ տուս եկինք նոցա վերայ, ...կոխեցինք, կոտորեցինք, եսիրն, ապրանքն թափեցինք, փախցրինք. էլ նոր շատունք գալու են մեզ վերայ։ ...Թէ, որ ետու առաջ, շատ և փոքր, մեզ մէկ օգնութիւն անելու եք, պիտի որ վախտին հասնէք Շամախի, որ ժամանակն այս է, թէ որ անցաւ, էլ մեր հովին հասնիլ չի»[30]։

Ինչպես տեսնում ենք, տարբեր տարիներով թվագրվող մեր հիշատակած սկզբնաղբյուրները ամենայն բարձրությամբ վկայում են, որ Եսայի Հասան Ջալալյանը, նախորդ տարիների պես, 1724—1725 ու 1726 թթ. առաջին կեսին ոչ միայն

---

26 Նույն տեղում։

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 229։

28 Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, стр. 381—382.

29 Նույն տեղում, էջ 420։

30 АВПР, ф. Сношения России с Арменией, 1739, д. 2, л. 61. Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 254։

չի հեռացել ազատագրական պայքարից, այլև եղել է նրա ամենաակտիվ կազմակերպիչներից ու ղեկավարներից և ազատագրական պայքարի անմիջական մասնակիցներից մեկը։ Մյուս կողմից, որոշակի է դառնում նաև այն, որ մինչև 1726 թ. երկրորդ կեսը Եսայի Հասան Ջալալյանը դեռևս հույսը չէր կտրել Ռուսաստանից սպասվող օգնությունից և շարունակում էր աղերսել, որ այդ օգնությունը որքան հնարավոր է շուտ հասցվի հայերին։ Նման վկայություններ կարելի է շատ բերել, սակայն, մեր կարծիքով, այսքանն էլ բավական է լիովին համոզվելու, որ իրականությանը բոլորովին չի համապատասխանում Պ. Հարությունյանի այն տեսակետը, որ, իբր, սկսած 1724 թ. Եսայի Հասան Ջալալյանը աստիճանաբար հեռացել է ազատագրական պայքարից և Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդին ազատագրելու շարժումից։ Ուստի և Եսայի Հասան Ջալալյանի 1724—1725 ու 1726 թթ. առաջին կեսի գործունեությունը չի կարելի անջատել նրա նախորդ շրջանի գործունեությունից ոչ ռուսական կողմնորոշման և ոչ էլ ազատագրական պայքարին մասնակցելու հարցում։

Վկայակոչելով ռուսական արքունիքին ուղղված Ավան և Օհան յուզբաշիների 1726 թ. նոյեմբերի 15-ի նամակը, Պ. Հարությունյանը Եսայի Հասան Ջալալյանին համարում է դավաճան[31]։

Այդ նամակում իրոք Ավան և Օհան յուզբաշիները հայտնում են, որ 1726 թ. նոյեմբերին, երբ թուրքական բանակը Շամախուց եկավ Բարդա, Ղարաբաղի ողջ մելիքներն ու քեթխուդաները և Եսայի Հասան Ջալալյանը գնացին թուրքերին ընդառաջ և նրանց հետ միասին եկան Շոշու՝ Ավան և Օհան յուզբաշիների բերդի վրա։ Կռիվը տևեց ութ օր։ Թուրքերը չկարողանալով գրավել բերդը, մեծ կորուստներ տվեցին, բայց և բավականին ավար վերցրած, խուսափելով վերահաս ցրտերից, վերադարձան Գանձակ։ Նամակում ուղղակի ասված է. «Այս է Ղարայպաղին խապարն։ ՌՃՀԵ (1726) թվին, նոյընբերի ԺԵ (15) էր, որ սարասկարն Շամախու եկաւ Պարդայ, Եսայի հոգևոր տէրն քուլ (ողջ, ամբողջ—Ֆ. Պ.) Ղարայպաղի մէլիքներովն և քաթխուդովն գնացին Պարդայ սարասկարին ղանշար (ընդառաջ—Ֆ. Պ.)։ Սարասկարն վեր կալան եկին Շօշու՝ Ավան ուզպաշին և Ոյհան ուզպաշին ղալին վերայ, Ը (8) օր կռիւ արին թօվով և ղօբարով, քարին մինչի կէսն կալան, էլ աւել չի կարացին գնալ։ Եւ շատ ուժով եսիր տարան Ղարայպաղան...»[32]։ Այս նամակը վերին աստիճանի կարևոր սկզբնաղբյուր է և պետք է քննության առնել հանգամանորեն, մի բան, որ դժբախտաբար չի արել Պ. Հարությունյանը։ Քաջատեղյակ լինելով այդ փաստաթղթին, այնուամենայնիվ, նա զարմանալիորեն հարցին մոտեցել է միակողմանի, որովհետև այնտեղ խոսքը միայն Եսայի Հասան Ջալալյանին չի վերաբերում, այլ փաստորեն Ավան և Օհան յուզբաշիներից բացի, Ղարաբաղի բոլոր մելիքներին ու տանուտերերին։ Հավանաբար նա ուշադրություն չի դարձրել նաև «քուլ» բառի վրա, որը նշանակում է բոլոր, ամբողջ։ Ինչպես տեսանք, գրության մեջ ասված է. «...Եսայի հոգևոր տէրն քուլ Ղարայպաղի մէլիքներովն և քաթխուդովն գնացին Պարդայ սարասկարին ղանշար»։ Հետևաբար, եթե ընդունենք, որ Պ. Հարությունյանի՝ Եսայի Հասան Ջալալյանին

31 П. Т. Арутюнян. նշվ. աշխ., էջ 233—234, Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 254։

32 АВПР. ф. Сношения России с Арменией. 1739, д. 2, л. 49, հմմտ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 257։

տված գնահատականը ճիշտ է, ապա ստացվում է, որ ոչ միայն նա, այլ նաև նրա հետ եղած Ղարաբաղի բոլոր մելիքներն ու քեդխուդաները, որոնք տարիներ շարունակ ժողովրդի գլուխ անցած զենքը ձեռքներին պայքարել են լեզգիների, պարսկական և թուրքական բռնակալների դեմ, բացառությամբ Ավան և Օհան յուզբաշիների, դավաճաններ են։

Այժմ տեսնենք, թե իրականում ինչ է տեղի ունեցել 1726 թ. երկրորդ կեսին։ Հայտնի է, որ դեռևս 1724 թ. հունիսի 12-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի Ռուսաստանը, ելնելով իր ներքին և արտաքին անբարենպաստ պայմաններից, հարկադրված դիմեց զիջումների, հնարավորություն չունենալով այդ ժամանակ բացահայտ ռազմական օգնություն ցույց տալ հայ-վրացական ազատագրական ուժերին։ Այդ պայմանագրով թուրքերը ճանաչեցին Ռուսաստանի տիրապետությունը՝ Դերբենտից մինչև Մազանդարան ընկած մերձկասպյան տարածքների վրա, իսկ Ռուսաստանն էլ ճանաչեց թուրքերի իրավունքները Իրանի անդրկովկասյան տիրույթների նկատմամբ, ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաքներն ու Ղարաբաղի և Ղափանի մարզերը։ Այդ պայմանագրի մասին Ղարաբաղի ազատագրական պայքարի ղեկավարները մինչև 1726 թ. կեսերն անտեղյակ էին և այդ պատճառով էլ շարունակում էին ռազմական օգնություն խնդրել Ռուսաստանից, մինչդեռ պայմանագիրը թույլ չէր տալիս Ռուսաստանին հրապարակավ ցույց տալու այդ օգնությունը։ Բայց երբ այդ պայմանագրի համաձայն 1726 թ. հուլիսին Անդրկովկաս ժամանեց ռուս-թուրքական նոր սահմանագիծն անցկացնող հանձնաժողովը և սկսեց իր գործունեությունը, ազատագրական պայքարի ղեկավարներին, աստիճանաբար ամեն ինչ պարզ դարձավ։ Ռուսաստանի պատվիրակ Իվան Կարապետին ուղղված նույն թվականի հուլիսի 19-ի նամակում Եսայի Հասան Ջալալյանը այդ մասին հայտնում է հետևյալը. «...փաշան այն եկող տեսպանն առաւ, գնաց Շամախի, որ երկուց թագաւորաց հրամանաւ տեղն սնօռ (սահման—Ֆ. Պ.) պիտի հաստատեն, տեսնումք ո՞ր-տեղ կու սահմանեն, հալա մաշուր (հայտնի—Ֆ. Պ.) չի, վերջն աստուած գիտէ, թէ զինչ լինելոց է։ Ապա՝ այս եկողս հենց պահեցին ներսն, դուրսն, որ մէկ մարդ չկարաց մօտանալ կամ տէսնել, կամ խօսք տալ, առնուլ...»[33]։

Նամակից երևում է նաև, որ նույնիսկ սահմանագիծը որոշող հանձնաժողովի Անդրկովկաս գալուց հետո էլ, հայերը անտեղյակ լինելով 1724 թ. պայմանագրին, դեռևս Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու որոշ հույս ունեին. «տեսնումք ո՞րտեղ կու սահմանեն, հալա մաշուր չի, վերջն աստուած գիտէ, թէ զինչ լինելոց է»[34] գրում է Եսայի Հասան Ջալալյանը։ Սակայն շուտով այդ վերջը հայտնի դարձավ և նոր սահմանագծով, ինչպես նշեցինք վերևում, ոչ միայն Թիֆլիսը, Գանձակը և Նախիջևանը իրենց շրջակայքով, այլև Ղարաբաղի և Ղափանի մարզերը ևս անցան Թուրքիայի տիրապետության տակ։ Սահմանագիծը որոշելուց հետո թուրքական հրամանատարությունն անմիջապես կոչով և սպառնալիքներով դիմեց իրեն հատկացված երկրամասերի բնակչությանը, պահանջելով ընդունել սուլթանի իշխանությունը, իսկ այն վայրերում, որտեղ բնակչությունը զենք էր բարձրացրել, ցած դնել զենքերը և ենթարկվել։ Ահա այս պայմաններում էր, որ սկսվեց հուսալքությունը, որն

33 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 256։

34 Նույն տեղում։

էլ իր հերթին բացասաբար անդրադարձավ հայ զինվորականության և ժողովրդի տրամադրության վրա, խախտեց ազատագրական պայքարին մասնակցող ուժերի միասնությունն ու երկպառակություն առաջացրեց շարժման մասնակիցների մեջ։ Շարժման ղեկավարների մեծ մասը, այդ թվում նաև Եսայի Հասան Ջալալյանը, ելնելով ստեղծված ծանր կացությունից, բնակչության մասսայական կոտորածից ու գերեվարումից և երկիրը հրի ու սրի մատնելուց փրկելու նպատակով, ինչպես նաև հուսալով, որ բարենպաստ պայմանների առկայության դեպքում Ռուսաստանը Անդրկովկասում կդիմի եռանդուն գործողությունների, որոշեցին առերես ընդունել թուրքական հրամանատարության պահանջները և մնալ Ղարաբաղում։ Նրանք այլ անելիք չունեին։

Պետք է ասել, որ այդ ժամանակ թուրքերի հետ հաշտություն էին կնքել նաև հայերի դաշնակից Կարաչորոլու քրդերը և Մուզանի շահսևանները[35]։ Իսկ ազատագրական պայքարի որոշ ղեկավարներ՝ Ավան և Օհան յուզբաշիներն ու ուրիշներ, հրաժարվեցին զենքը ցած գնելուց, որոշելով անհաջողության դեպքում հեռանալ Ռուսաստան։ Մեր այս տեսակետի օգտին են խոսում նաև սկզբնաղբյուրները։ Այսպես, ռուսական կողմին ուղղված 1726 թ. հունիսի 15-ի նամակը Եսայի Հասան Ջալալյանը ավարտում է հետևյալ տողերով. «Թէ որ ետու առաջ, շատ և փոքր, մեզ մէկ օգնութիւն անելու էք... ժամանակն այս է,... ապա թէ, որ իսկի բնավ մեզ օգնութիւն հասնելոյ չէք, էլվի (դարձյալ—Ֆ. Պ.) մեզ մէկ սարհ (հաստատ—Ֆ. Պ.) ջողապ գրէք, մեր փիքրն քաշեմք. որ բանն բանէն անցել է»[36]։ Իսկ Ավան և Օհան յուզբաշիները ռուսական արքունիքին ուղղած 1726 թ. նոյեմբերի 15-ի նամակը վերջացնում են հետևյալ ձևով. «Թէ որ իմանամք, թագաւորն էս երկիրս չէ կալոյ, մեզ համար քսմակ ողարկէք, որ մեք զամք թագաւորին ղուլուղ անեմք, որ մեր վերչն այս է»[37]։ Եվ իրոք, այս դեպքերից ընդամենը մեկ տարի անց՝ 1728 թ. սկզբներին. Ավան յուզբաշին իր համախոհներով, թվով 232 մարդ, արդեն Բաքվում էր, որտեղից էլ անցավ Ռուսաստան։ Իսկ Եսայի Հասան Ջալալյանը ենթարկվելով մի կողմից դեռևս պայքարը շարունակողների կշտամբանքներին, մյուս կողմից էլ ազատագրական պայքարից տուժածների պարսավանքներին, որ իբր խաբել է իրենց, հուսալքված մահացավ 1728 թ. սկզբներին։

Այսպիսով, սկզբնաղբյուրները մեզ հնարավորություն են տալիս վստահորեն ասելու, որ ամենայն հայոց կաթողիկոսությունը ռուսական արքունիքի հետ քաղաքական կապերի մեջ է մտել դեռևս XVII դ. 70-ական թվականներին. սակայն եթե այդ ժամանակ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու շարժումն իր մեջ ընդգրկում էր հայ ժողովրդի սոսկ վերին խավի առանձին ներկայացուցիչների, ապա XVIII դ. առաջին քառորդում այդ շարժումը դարձավ ավելի մասսայական՝ ընդգրկելով հասարակության բոլոր խավերին, իսկ տարածքային առումով ծավալվելով ընդգրկեց ամբողջ Արևելյան Հայաստանը։ Նման պայմաններում էջմիածինը նկատի ունենալով հատկապես Արարատյան երկրամասի հայության դեպի այդ շարժումն ունեցած համակրանքն ու ձգտումները, նույնպես հարեց այդ շարժմանը, բավարարվելով քաղաքական պայմանների ընձեռնած հնարավորություններով։ Այդ հանգա-

35 «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Սաֆրաստյան, հ. Ա, Երևան, 1964, էջ 159։

36 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 254։

37 Նույն տեղում, էջ 257։

մանքը կարևոր դեր խաղաց նաև էջմիածնի և Գանձասարի միջև եղած տարաձայնությունները հարթելու խնդրում, որոնց դրդապատճառները, ինչպես տեսանք, ոչ մի առնչություն չունեին հայ-ռուսական հարաբերությունների և ազատագրական պայքարի հետ։

Միաժամանակ, կարող ենք ասել, որ թե՛ Եսայի Հասան Ջալալյանը, և թե՛ նրա համախոհները հավատարիմ մնալով ազատագրական շարժման սկզբունքներին, վերջին շրջանում ելնելով ստեղծված քաղաքական ծանր պայմաններից դիմեցին կոմպրոմիսի։

ЭЧМИАДЗИНСКИЙ КАТОЛИКОСАТ И АРМЯНО-РУССКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XVIII В.

ФРУНЗЕ ПОГОСЯН

Резюме

Первоисточники, касающиеся вопросов сношений католикоса всех армян с Россией в первой четверти XVIII в., раскрывают связи Эчмиадзина с развернувшейся в Карабахе освободительной борьбой и свидетельствуют о том, что Эчмиадзин и вообще армяне Араратской области придерживались русской ориентации и стремились к освобождению своей родины с помощью России. Поэтому вовсе не соответствует действительности мнение видного историка Лео о том, что якобы в основе разногласий между Эчмиадзином и Гандзасаром лежали разные подходы к освободительной борьбе и армяно-русским отношениям. Одновременно надо отметить, что в силу сложившихся условий деятельность Эчмиадзинского патриаршества в ту пору не могла иметь таких больших масштабов, какими характеризовалась деятельность Гандзасарского католикосата.

Фактический материал показывает, что ошибочным является и мнение П. Арутюняна, утверждающего, что будто в последний период своей деятельности гандзасарский католикос Есаи Хасан-Джалалян предал освободительное движение.